

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի 2015 թվականի սեպտեմբերի 5-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2015-2016 ուսումնական տարվա մեկնարկի մասին:
2. Բնագիտական ֆակուլտետում 2014-2015 ուսումնական տարվա արդյունքներով ուսանողների փոխատեղման վերաբերյալ:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներ:

Լսեցին – Բնագիտական ֆակուլտետում ուսումնական գործըթացի պատշաճ կազմակերպման և 2014-2015 ուսումնական տարվա արդյունքներով ուսանողների փոխատեղման վերաբերյալ հարցերը /զեկուցող՝ Մ. Պ. Ավագյան/:

Նշվեց, որ ֆակուլտետում իրականացվում է կանոնավոր ուսումնական գործընթաց, ամենօրյա աշխատանք է կատարվում ուսանողների հետ, ինչի արդյունքում նկատվել է ուսանողների առաջադիմության որոշակի աճ:

Քննարկվեցին փոխատեղման ենթակա ուսանողների ակադեմիական առաջադիմության արդյունքները:

Որոշեցին – Համալսարանի մանդատային հանձնաժողովին ներկայացնել բոլոր այն ուսանողների ցուցակը, ովքեր

- պահպանում են անվճար տեղերում սովորելու իրենց իրավունքը,
- անվճար համակարգից անցնելու են վճարովի համակարգ,
- վճարովի համակարգից անցնելու են անվճար համակարգ:

Լսեցին – 2015-2016 ուսումնական տարում դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունների վերաբերյալ հարցը /զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ/:

Որոշեցին – Մասնագիտությունների առանձնահատկություններից ելնելով՝ աշխատանքային ուսումնական պլանների փոփոխությունները արտացոլել դասախոսների ուսումնական բեռնվածքի մեջ և ներկայացնել հաստատման:

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Մ. Պ. Ավագյան

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝ Մ. Հ. Հովհաննիսյան